

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻԶԵՎԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

19.02.2016թ. ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 29-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային ժամանակացույցի հաստատումը:
/Զեկուցող Ս. Ա. Աթոյան/
2. ԵՊՀ ԻՄ զարգացման ռազմավարական ծրագրի (2016-2020թթ.) հաստատումը: /Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/
3. ԵՊՀ ԻՄ –ի 2015-2016 ուստարվա առաջին կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցանկի հաստատումը:
/Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/
4. ԵՊՀ ԻՄ-ի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման 2015-2016 ուստարվա առաջին կիսամյակի

արդյունքների մասին:

/Ձեկուցող Ս. Ա. Առաքելյան/

5. Ընթացիկ հարցեր.

- ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի դոցենտ Ակսել Հարությունի Պոտոսյանի «Զբոսաշրջության հիմունքներ» ուսումնական ձեռնակի հրատարակման երաշխավորման մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին՝ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2015-2016 ուս. տարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային ժամանակացույցի հաստատում հարցի կապակցությամբ լսեցին գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանի հաղորդումը: Նշվեց, որ գիտական խորհրդի հաստատմանն ներկայացված 2015-2016 ուս. տարվա երկրորդ կիսամյակի գիտխորհրդի ժամանակացույցի նախագիծը կազմված է հաշվի առնելով ԵՊՀ համապատասխան ժամանակացույցը և ԵՊՀ ԻՄ-ի բոլոր ստորաբաժանումների ժամանակացույցները և ԵՊՀ ԻՄ-ի 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի նախագիծը:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը, ՈԻՄՎ պետ Ա.Ց. Դավթյանը:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին և առաջարկեցին հաստատել գիտական խորհրդի 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

Որոշեցին

Որոշում 14/1

Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի ժամանակցույցը, համաձայն հավելված 1:

Օրակարգի երկրորդ՝ ԵՊՀ ԻՄ զարգացման ռազմավարական ծրագրի (2016-2020թթ.) հաստատումը հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա կարևորելով ռազմավարական ծրագրի արդյունավետ կազմումը և իրականացումը, նշեց, որ համապատասխան հանձնաժողովը ռազմավարական ծրագիրը կազմելուց հաշվի է առել նաև բոլոր ստորաբաժանումների կողմից ներկայացված առաջարկները և ԵՊՀ –ի 2016-2020թթ. ռազմավարական ծրագիրը: Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը նշեց, որ 2016-2020թթ. ԵՊՀ ԻՄ-ի զարգացման ռազմավարական ծրագիրը մանրամասն քննարկվել է մասնաճյուղի բոլոր ստորաբաժանումներում, ուսանողական կառույցների և արտաքին շահակիցների հետ: Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը հանձնաժողովի կատարած աշխատանքները գնահատեց լավ և առաջարկեց հաստատել 2016-2020թթ. ԵՊՀ ԻՄ-ի զարգացման ռազմավարական ծրագրի ներկայացված նախագիծը:

Արտահայտվեցին – ՈԻՄՎ պետ Ա.Յ. Դավթյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ուսանողական խորհրդի նախագահ Ռ. Հովսեփյանը:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին ԵՊՀ ԻՄ-ի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի ներկայացվող տարբերակին: Մասնավորապես ուսանողական խորհրդի նախագահ Ռ. Հովսեփյանը շնորհակալություն հայտնեց մասնաճյուղի ղեկավարությանը ուսանողության առաջարկները հնարավորինս հաշվի առնելու համար:

Որոշում 14/2

Հաստատել ԵՊՀ ԻՄ զարգացման ռազմավարական ծրագրը (2016-2020թթ.) համաձայն հավելված 2-ի:

Օրակարգի երրորդ՝ ԵՊՀ ԻՄ –ի 2015-2016 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցանկի հաստատումը հարցի կապակցությամբ տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ֆակուլտետների գիտական խորհուրդները քննարկել և մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանն են ներկայացրել անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը:

Գիտխորհրդի հաստատմանն է ներկայացված.

- 1) Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Պատմություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երկրորդ կուրսի ուսանող **Մհեր Վաչագանի Բայրամյանին՝ «Վազգեն Սարգսյան»** անվանական կրթաթոշակ՝ երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու համար:
- 2) Բնագիտական ֆակուլտետի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի **Ալվինա Ալեքսանի Գևորգյանին՝ «Մոնթե Մելքոնյան»** անվանական կրթաթոշակ՝ երկու կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու և հասարակական ակտիվ գործունեության համար:
- 3) Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի

երրորդ կուրսի ուսանողուհի **Աննա Գրիշայի Սարգսյանին՝ «Շառլ Ազնավուր»** անվանական կրթաթոշակ՝ չորս կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու համար:

4) Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երկրորդ կուրսի ուսանողուհի **Արուսյակ Արտավազի Գասպարյանին՝ «Դավիթ Անհաղթ»** անվանական կրթաթոշակ՝ երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու համար:

5) Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երկրորդ կուրսի ուսանողուհի **Մերի Սահակի Սարգսյանին՝ «Գրիգոր Նարեկացի»** անվանական կրթաթոշակ՝ երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, հասարակական ակտիվ դիրքորոշում և պատշաճ վարքագիծ ունենալու համար:

Արտահայտվեցին – տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ն. Բ. Խուդավերդյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ա. Ալեքսանյանը, բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, Մ. Ա. Զաքարյանը, կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, Ա. Շ. Մարգարյանը: Նրանք մասնավորապես նշեցին, որ նշված ուսանողների հասարակական ակտիվությունը որոշվել է ըստ ֆակուլտետների ուսանողական խորհուրդների ներկայացման

Որոշեցին

Որոշում 14/3

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Պատմություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երկրորդ կուրսի ուսանող **Մհեր Վաչագանի Բայրամյանին** 2015-2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ ս/թ մարտի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը, նշանակել **«Վազգեն Սարգսյան»** անվանական կրթաթոշակ:

Որոշում 14/4

Բնագիտական ֆակուլտետի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի **Ալվինա Ալեքսանի Գևորգյանին՝** 2015-2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ ս/թ մարտի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը, նշանակել **«Մոնթե Մելքոնյան»** անվանական կրթաթոշակ:

Որոշում 14/5

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանողուհի **Աննա Գրիշայի Սարգսյանին** 2015–2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ ս/թ մարտի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը, նշանակել **«Շառլ Ազնավուր»** անվանական կրթաթոշակ:

Որոշում 14/6

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երկրորդ կուրսի ուսանողուհի **Արուսյակ Արտավազի Գասպարյանին** 2015 –

2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ ս/թ մարտի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը, նշանակել **«Դավիթ Անհաղթ»** անվանական կրթաթոշակ:

Որոշում 14/7

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի երկրորդ կուրսի ուսանողուհի **Մերի Սահակի Սարգսյանին՝** 2015-2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ ս/թ մարտի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը, նշանակել **«Գրիգոր Նարեկացի»** անվանական կրթաթոշակ:

Օրակարգի չորրորդ՝ ԵՊՀ ԻՄ-ի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման 2015-2016 ուստարվա առաջին կիսամյակի արդյունքների մասին լսեցին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ – ում հարցումներին մասնակցել են ուսանողների 78 տոկոսը: Մասնակցության ամենաբարձր մասնակցությունը եղել է հումանիտար գիտությունների ֆակուլտետում:

Ըստ դեկանի և դեկանի տեղակալի աշխատանքի գնահատման արդյունքների արդյունքները բաշխվել են հետևյալ կերպ.

1-ին տեղում է ԿԱՖ 4,87%

2-րդ տեղում է ԲԳՖ 4,84%

3-րդ տեղում է ՏԳՖ 4,83%

4-րդ տեղում է ՀԳՖ 4,79%:

Ըստ դեկանատի աշխատակիցների

1-ին տեղում է ՏԳՖ 4,87%

2-րդ տեղում է ԿԱՖ 4,85%

3-րդ տեղում է ՀԳՖ 4,83%

4-րդ տեղում է ԲԳՖ 4,55%:

ԵՊՀ ԻՄ-ում կոռուպցիոն ռիսկեր գրեթե չկա, կուրատորների աշխատանքը գնահատվել է հիմնականում դրական:

Արդյունքները ամփոփվելուց հետո տրվել է ֆակուլտետներին, քննարկելու և համապատասխան եզրակացություններ անելու և լուծումներ տալու համար:

Արտահայտվեցին – ՈւՄՎ պետ Ա. Յ. Դավթյանը և այլոք: Ելույթ ունեցողները կատարված աշխատանքը գնահատեցին լավ:

Որոշեցին

Որոշում 14/8

Ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր:

Լսեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի դոցենտ Ակսել Հարությունի Պոտոսյանի «Զբոսաշրջության հիմունքներ» ուսումնական ձեռնակի հրատարակման երաշխավորման մասին գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանի հաղորդումը:

Մ. Աթոյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը 30.01.2016թ. կայացած նիստում որոշում է կայացրել դիմել ԵՊՀ Իմ գիտական խորհրդին «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի

դոցենտ Ակսել Հարությունի Պոտոսյանի «Զբոսաշրջության հիմունքներ» ուսումնական ձեռնակը հրատարակման երաշխավորելու համար: Ձեռնարկը գրված է հայոց լեզվով: Ձեռնարկում ամփոփված են դոցենտ Ա. Պոտոսյանի երկարամյա ուսումնասիրությունները զբոսաշրջության ոլորտի վերաբերյալ: Տվյալ աշխատանքը կարող է ծառայլ որպես ուսումնական ձեռնարկ ԲՈՒՀ-երի «Սերվիս» և «Զբոսաշրջություն» մասնագիտությունների ուսանողների և այդ ոլորտների աշխատողների համար: Ներկայացված ձեռնարկը գրախոսվել է ամբիոնի առաջատար դասախոսների կողմից:

Արտահայտվեցին - Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Ն. Խուդավերդյանը, տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանը:

Նրանք կարևորեցին «Սերվիս» մասնագիտությամբ ուսանողների և դասախոսների համար «Զբոսաշրջության հիմունքներ» առարկայի հայերեն լեզվով մասնագիտական գրականությամբ համլրելու փաստը :

Որոշեցին

Որոշում 14/9

Երաշխավորել հրատարակման տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի դոցենտ Ակսել Հարությունի Պոտոսյանի «Զբոսաշրջության հիմունքներ» ուսումնական ձեռնակը:

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ _____ Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար _____ Ս.Ս. ԱԹՈՅԱՆ

19.02.2016թ.